ՊՅՈՏՐ ԻԼՅԻՉ ՉԱՅԿՈՎՍԿԻ

1840-1893

Ռուս կոմպոզիտոր Պյոտր Չայկովսկին XIX դարի 2-րդ կեսի դասական երաժշտության խոշորագույն դեմքերից է, սիմֆոնիայի մեծ վարպետ,
հատկապես՝ քնարական-դրամատիկական սիմֆոնիայի ժանրում:

Կենսագրությունը



Պյոտր Չայկովսկին 1850–59 թթ-ին սովորել է **Սանկտ Պետերբուրգի** իրավագիտության ուսումնարանում, **1865** թ-ին ավարտել է կոնսերվատորիան. աշակերտել է ճանաչված ոմպոզիտոր **Անտոն Ռուբինշտեյնին**: **1866–78** թթ-ին դասավանդել է Մոսկվայի կոնսերվատորիայում: **1868** թ-ից գրել է երաժշտաքննադատական հոդվածներ, **1887** թ-ից հանդես է եկել նաև որպես դիրիժոր: Չայկովսկին՝ որպես արվեստագետ, ձևավորվելով **1860**-ական թվականների ժողովրդավարական գաղափարների ազդեցությամբ, ստեղծագործություններում հշմարտացիորեն արտացոլել է կյանքն իր բազմազան դրսևորումներով, ստեղծել է ժողովրդական կենցաղի գունագեղ և բնության բանաստեղծական տեսարաններ: Կոմպոզիտորը ռեալիստական մեծ ուժով է բացահայտել մարդու ներաշխարհը: Նրա ստեղծագործության առանցքային թեման անհատի բախումն է անողոք իրականությանը, պայքարը՝ իր իրավունքների համար:

Ստեղծագործություններ

Չայկովսկին գրել է **10** օպերա, **3** բալետ, **7** սիմֆոնիա, նախերգանքներ, սյուիտներ, կամերային գործիքային անսամբլներ, կանտատ, շուրջ 100 ռոմանս, երգեր, զուգերգեր, խմբերգեր, դաշնամուրի, ջութակի, թավջութակի պիեսներ: Նրա լավագույն երկերից են Չորրորդ, Հինգերորդ և Վեցերորդ («Պաթետիկական») սիմֆոնիաները, որոնք համաշխարհային սիմֆոնիկ երաժշտության գոհարներից են:

Սիմֆոնիկ երկեր

Հանրահայտ են նաև **«Ֆրանչեսկա դա Ռիմինի»** նախերգանքը, **«Ռոմեո և Ջուլիետ»** նախերգանք-ֆանտազիան, դաշնամուրի Առաջին և Ջութակի կոնցերտները:
Չայկովսկու օպերաներին բնորոշ են դրամատիկական սուր բախումներն ու հոգեբանական խոր ընդհանրացումները, որտեղ առաջնայինը երգային մասն է, սակայն նվագախումբը նույնպես նպաստում է կերպարների ստեղծմանը, հերոսների հոգեվիճակների բացահայտմանը, կենցաղի պատկերմանը: Հասուն շրջանում է գրել իր լավագույն օպերաները՝ **«Եվգենի Օնեգին»**, **«Պիկովայա դամա»** (երկուսն էլ՝ ըստ **Ալեքսանդր Պուշկինի**), **«Օռլեանի կույսը», «Մազեպա», «Չարոդեյկա», «Չերևիչկի», «Իոլանտա»:** Չայկովսկին, կիրառելով սիմֆոնիկ երաժշտության զարգացման սկզբունքները, բալետում նշանավորել է նոր փուլ. խորացրել է բալետի հոգեբանական բովանդակությունը, ստեղծել վառ կերպարներ: Կոմպոզիտորի **«Կարապի լիճը», «Քնած գեղեցկուհին», «Ծչելկունչիկ»** բալետներն այդ ժանրի լավագույն գործերից են: Հանրահայտ են Չայկովսկու **«Մանկական ալբոմ», «Տարվա եղանակներ»**դաշնամուրային պիեսները, Իտալական կապրիչչոն, Սերենադը՝ լարային նվագախմբի համար, սիմֆոնիկ պատկերները: Նրա ռոմանսներում շեշտված են մեղեդայնությունն ու զգացմունքների արտահայտման անմիջականությունը:

«Կարապի լիճը»

«Շչելկունչիկ»

Չայկովսկին մեծապես նպաստել է ազգային երաժշտության տարածմանը Ռուսաստանում և արտասահմանում: **1887–93** թթ-ին պարբերաբար համերգներով շրջագայել է **Գերմանիայում, Անգլիայում, Չեխիայում և Ֆրանսիայում, 1891** թ-ին՝ **ԱՄՆ**-ում:

Չայկովսկու ստեղծագործությունը խոր հետք է թողել ռուսական երաժշտության պատմության մեջ:

1886–89 թթ-ին Չայկովսկին մի քանի անգամ Թիֆլիսում ներկա է եղել իր ստեղծագործություններին նվիրված համերգներին, մտերմացել է կոմպոզիտոր Գենարիոս Ղորղանյանի հետ, հայկական եկեղեցում լսել ժամերգություն: Երևանի օպերայի և բալետի թատրոնում բեմադրվել են «**Եվգենի Օնեգին**», «**Պիկովայա դամա**»օպերաները, «**Կարապի լիճը**», «**Ճչելկունչիկ**» բալետները և այլ գործեր:

«...Հաճախել եմ առավել նշանավոր եկեղեցիներ .... նաև հայկական եկեղեցի, որտեղ ինձ շատ հետաքրքրեցին ժամերգության առանձնահատկությունները՝ ընդհանրապես, և երգեցողությունը՝ մասնավորապես»,– **Պյոտր Չայկովսկու՝ Նադեժդա ֆոն Մեքին գրած նամակից**:

Screencast-O-Matic.com

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱԶԴԱՆԻ N 7 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԴԱՍՎԱՐ՝
ԳԱՅԱՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ